Կարգապահական գործ թիվ ԿԳ-25058

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՆԻ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Արաքս Վարդանյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Վահե Աստվածատրյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ դիմող՝ սնանկության գործերով կառավարիչ Մայիս Հայրապետյանի,

քննության առնելով փաստաբան Անի Արտավազդի Հովհաննիսյանի **(այսուհետև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 2610) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Սնանկության գործերով կառավարիչ Մայիս Հայրապետյանը **(այսուհետև՝ Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետև՝ Պալատ)**, հայտնել է, որ թիվ ՍՆԴ/3751/04/22 գործով նշանակվել է որպես սնանկության գործով կառավարիչ: Նշված սնանկության գործի շրջանակներում Ժիրայր Տիգրանյանից գումար բռնագանձելու պահանջի մասին հայցադիմումն ընդհանուր իրավասության դատարան ներկայացնելու և իր շահերը դատարանում ներկայացնելու համար Դիմողը փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքել փաստաբան Անի Հովհաննիսյանի հետ և տրամադրել վերջինիս լիազորագիր:

Փաստաբանը 2023 թվականի դեկտեմբերի 7-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (**այսուհետև՝ Դատարան**), որի հիման վրա հարուցվել է թիվ ԵԴ2/42032/02/23 քաղաքացիական գործը:

Փաստաբանը, Դատարանի հայցադիմումի ընդունումը մերժելու և վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից նշված որոշումը վերացնելու մասին դատական

Թիվ ԿԳ-25058-2-Ա
14.05.2025թ.

ակտ կայացնելու վերաբերյալ Դիմողին գրություն ուղարկելուց բացի, որևէ այլ տեղեկատվություն չի ներկայացրել Դիմողին: Գործի ընթացքի մասին Դիմողը տեղեկությունները ստացել է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից:

«Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից Դիմողը տեղեկացել է, որ դատարանը 30.10.2024թ. կողմերի միջև ապացուցման բեռ բաշխելու մասին որոշում է կայացրել, հաջորդ նախնական դատական նիստն էլ նշանակել է 06.02.2025թ.:

Դիմողը համոզված է եղել, որ Փաստաբանը կքննարկի իր հետ ապացուցման ենթակա փաստերի հարցը, կտեղեկացնի ձեռնարկվելիք գործողությունների մասին և 06.02.2025թ. դատական նիստում կներկայացնի հայցը հիմնավորող ապացույցները, մինչդեռ, «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից Դիմողը տեղեկացել է, որ Դատարանը 15.11.2024թ. կայացրել է որոշում թիվ ԵԴ2/42032/02/23 քաղաքացիական գործի վարույթը կարճելու և Դատարանի կողմից կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին: Նշված որոշումից հայտնի է դարձել, որ քաղաքացիական գործը կարճելու համար հիմք է հանդիսացել Փաստաբանի կողմից 12.11.2024 թվականին ներկայացված հայցից հրաժարվելու մասին միջնորդությունը, որով վերջինս հայտնել է, որ վեճը լուծվել է արտադատական կարգով:

Դիմողը կապ է հաստատել Փաստաբանի հետ և խնդրել պարզաբանել հայցից հրաժարվելու պատճառը: Փաստաբանը հայտնել է, որ Դիմողին հաշվետու չէ, միաժամանակ տեղեկացրել է, որ իրեն հայտնել են, հայցն արտադատական կարգով լուծված լինելու մասին, այդ պատճառով էլ հայցից հրաժարվել է:

Դիմողը նշել է, որ որպես կառավարիչ նման տեղեկություն կամ փաստը հիմնավորող ապացույց չունի և իր հետ այդ հարցի վերաբերյալ Փաստաբանի կողմից քննարկում չի կատարվել:

Նշվածի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբան Անի Արտավազդի Հովհաննիսյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Դիմումին կից ներկայացվել է փաստաբանի լիազորությունները դադարեցնելու մասին դիմումի և այն փաստաբանին և Դատարան ուղարկելը հաստատող փոստային անդորրագրերի, ինչպես նաև թիվ ԵԴ2/42032/02/23 քաղաքացիական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից քաղվածքի պատճենները:

Միևնույն ժամանակ սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ Դիմողին ներկայացվել է 12.03.2025 թվականին կազմված պահանջ (այսուհետ՝ Պահանջ) «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետև՝ Օրենք)** 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը պահանջը ստացել է 12.03.2025 թվականին և սահմանված ժամկետում որևէ ապացույց կամ բացատրություն չի ներկայացրել: Այնուհետև ի պատասխան ներկայացված պահանջի 02.04.2025թ. Պալատում մուտքագրվել է Դիմողի պատասխանը, որով ներկայացրել է «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի կողմից տրամադրված 2024 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածում կատարված հեռախոսային խոսակցությունների քաղվածքը: Դիմողը խնդրել է Պալատի նախագահին հարգելի ճանաչել սահմանված ժամկետում ապացույց չներկայացնելու պատճառները՝ նշելով, որ

դիմել է «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ին, քաղվածքը ստացել է շաբաթ օրը՝ 22.03.2025թ., 23.03.2025-30.03.2025թ. գտնվել է ՀՀ տարածքից դուրս և պատասխանին կից ներկայացրել է իր անձնագրի այն էջերի պատճենները, որոնցում առկա են նշումներ ՀՀ մուտքի և ելքի օրերի վերաբերյալ:

Պալատի նախագահի 14.04.2025թ. թիվ 141-Ա որոշմամբ Դիմողի կողմից սահմանված ժամկետում ապացույց չներկայացնելու պատճառները ճանաչվել են հարգելի:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Փաստաբանը 21.01.2025թ. թվականի բացատրությամբ հայտնել է, որ ի սկզբանե իր հետ կապ է հաստատել այլ շահագրգիռ անձ, ով հանդես է եկել Ժիրայր Տիգրանյանի սնանկության գործով պարտատեր: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ժիրայր Տիգրանյանից գումարի բռնագանձման հայց ներկայացնելու իրավունք ուներ միայն սնանկության գործով կառավարիչը, ուստի իրեն դիմաց շահագրգիռ անձը տեղեկացրել է, որ համաձայնության է եկել սնանկության գործով կառավարիչ Մայիս Հայրապետյանի հետ և վերջինս համաձայնվել է հայց ներկայացնել դատարան, պայմանով, որ իրեն այդ հարցում կօգնի փաստաբան և փաստաբանի վճարը կհատուցվի շահագրգիռ անձի կողմից:

Դիմողն իր պոզիտիվ գործողություններով թույլ է տվել որպեսզի Փաստաբանի մոտ ձևավորվի այն համոզմունքը, որ իրեն դիմած շահագրգիռ անձը գործում է Դիմողի հետ համաձայնեցված և ի վերջո դատարան դիմելու նախաձեռնությունը եղել է հենց այդ անձինը և ոչ թե Դիմողինը: Դիմողն իր հետ կնքել է պայմանագիր և իրեն տրամադրել է լիազորագիր հայցից հրաժարվելու լիազորությունը ներառյալ:

Այնուամենայնիվ, Փաստաբանը վերջինիս պահանջով, տեղեկացրել է նրան գործի ընթացքի բոլոր փուլերում, մեկ անգամ գրավոր իր պահանջով և բազմիցս բանավոր կարգով:

Հետագայում, նույն շահագրգիռ անձի կողմից ստացել է տեղեկատվություն, որ գործի անհրաժեշտությունը այլևս չկա, քանի որ Ժիրայր Տիգրանյանը համաձայնել է թաքցրած գումարը վճարել պարտատիրոջը, խնդրելով որ հայցից հրաժարվեն և իր դրամական միջոցների վրա կիրառված կալանքը վերացվի:

Փաստաբանը նշել է, որ գործել է իր վստահորդի կամքին համահունչ, չի ունեցել դիտավորություն վստահորդի շահերի դեմ գործելու և չի ունեցել բացարձակապես ոչ մի անձնական շահ կամ շահագրգռվածություն գործի ելքի վերաբերյալ:

Միևնույն ժամանակ սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ Փաստաբանին ներկայացվել է 12.03.2025 թվականին կազմված պահանջ (այսուհետ՝ Պահանջ) Օրենքի 39.5-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը պահանջը ստացել է 14.03.2025 թվականին, պահանջը ուղարկվել է նաև Փաստաբանի էլեկտրոնային փոստի հասցեով 25.03.2025թ., սակայն Փաստաբանը որևէ ապացույց կամ բացատրություն չի ներկայացրել:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 07.02.2025թ. թիվ 85-Ա/ԿԳ-25058 որոշման հիման փաստաբան Անի Հովհաննիսյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 6-րդ կետերի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետև՝ Կանոնագրք**) 2.7.2-րդ, 3.5.3-րդ, 3.5.5-րդ և 3.6.1-ին ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

14.02.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Դավիթ Առաքելյանին (**այսուհետև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 14.04.2025թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել հետևյալ փաստերը.

1. Փաստաբանի և Դիմողի միջև կնքվել է «Փաստաբանական ծառայություն մատուցելու մասին» պայմանագիր: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով:*

2. Փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերի պաշտպանությունը: *Սույն փաստը հաստատվում է թիվ ԵԴ2/42032/02/23 քաղաքացիական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

3. Փաստաբանի կողմից Դիմողի անունից ներկայացվել է հայցադիմում 27.100.000 (քսանյոթ միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ պատճառված վնասի և 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ փաստաբանի խելամիտ վարձատրության գումարի բռնագանձման մասին: *Սույն փաստը հաստատվում է թիվ ԵԴ2/42032/02/23 քաղաքացիական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

4. Փաստաբանը 12.11.2024թ. միջնորդություն է ներկայացրել հայցից հրաժարվելու վերաբերյալ, որի հիման վրա Դատարանը 15.11.2024թ. որոշմամբ կարճել է թիվ ԵԴ2/42032/02/23 քաղաքացիական գործի վարույթը: *Սույն փաստը հաստատվում է թիվ ԵԴ2/42032/02/23 քաղաքացիական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

5. Փաստաբանը կատարել է ոմն շահագրգիռ անձի հանձնարարականը՝ համարելով այն համաձայնեցված Դիմողի հետ, չի ստացել Դիմողի համաձայնությունը և ներկայացրել է հայցից հրաժարվելու վերաբերյալ միջնորդություն: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրություններով:*

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 14.04.2025թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 14.05.2025թ. ժամը 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7/2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

6. Փաստաբանի և Դիմողի միջև կնքվել է «Փաստաբանական ծառայություն մատուցելու մասին» պայմանագիր: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով:*

7. Փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերի պաշտպանությունը: *Սույն փաստը հաստատվում է թիվ ԵԴ2/42032/02/23 քաղաքացիական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

8. Փաստաբանի կողմից Դիմողի անունից ներկայացվել է հայցադիմում 27.100.000 (քսանյոթ միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ պատճառված վնասի և 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ փաստաբանի խելամիտ վարձատրության գումարի բռնագանձման մասին: *Սույն փաստը հաստատվում է թիվ ԵԴ2/42032/02/23 քաղաքացիական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

9. Փաստաբանը 12.11.2024թ. միջնորդություն է ներկայացրել հայցից հրաժարվելու վերաբերյալ, որի հիման վրա Դատարանը 15.11.2024թ. որոշմամբ կարճել է թիվ ԵԴ2/42032/02/23 քաղաքացիական գործի վարույթը: *Սույն փաստը հաստատվում է թիվ ԵԴ2/42032/02/23 քաղաքացիական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

10. Փաստաբանը չի տեղեկացրել Դիմողին թիվ ԵԴ2/42032/02/23 քաղաքացիական գործով հայցից հրաժարվելու մասին: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրություններով:*

11. Փաստաբանը չի ստացել Դիմողի համաձայնությունը թիվ ԵԴ2/42032/02/23 քաղաքացիական գործով հայցից հրաժարվելու վերաբերյալ: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրություններով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Անի Արտավազդի Հովհաննիսյանը փաստաբան է հանդիսանում 24.05.2019թ., և 2020-2025թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Անի Արտավազդի Հովհաննիսյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 6-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2, 3.5.3, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ կետերի և Կանոնագրքի 3.5.3 ենթակետի մասով.

Սույն կարգապահական գործի շրջանակներում, Դիմողի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով

Հանձնաժողովը արձանագրում է, որ Փաստաբանները Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը ստանձնելուց հետո փաստացի իրականացրել է որոշակի գործողություններ տրված հանձնարարության կատարման ապահովման ուղղությամբ, այնուհետև թիվ ԵԴ2/42032/02/23 քաղաքացիական գործով վարույթը կարճվելուց հետո առաջացել է Դիմողի դժգոհությունը Փաստաբանի կատարած գործողություններից: Մասնավորապես, Դիմողը Փաստաբանն վերագրել է իրեն շահերին հակասող գործողություն կատարելու վարքագիծ:

Վերոգրյալի համատեքստում, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցին.

- **Արդյո՞ք փաստաբան Անի Հովհաննիսյանը կատարել են Դիմողի շահերին հակասող որևէ գործողություն:**

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները, չկատարել վստահորդի շահերին հակասող որևէ գործողություն, չընդունել դիրքորոշում՝ առանց նրա հետ համաձայնեցնելու, բացառությամբ այն դեպքերի, երբ փաստաբանը համոզված է պաշտպանյալի ինքնազրպարտության մեջ, հակառակ պաշտպանյալի դիրքորոշման՝ չընդունել դեպքի հետ նրա առնչությունը և մեղավորությունը.*

Կանոնագիրքի 3.5.3 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է չկատարել վստահորդի շահերին հակասող որևէ գործողություն, չընդունել դիրքորոշում՝ առանց նրա հետ համաձայնեցնելու, բացառությամբ այն դեպքերի, երբ փաստաբանը համոզված է պաշտպանյալի (վստահորդի) ինքնազրպարտության մեջ, հակառակ պաշտպանյալի դիրքորոշման՝ չընդունել դեպքի հետ նրա առնչությունը և մեղավորությունը, ինչպես նաև իրավունք չունի դրդել կամ համոզել նրան իրեն մեղավոր ճանաչել:*

Վերոգրյալից հետևում է, որ Օրենքով և Կանոնագրքով փաստաբանի համար սահմանվում են մի շարք պարտականություններ, որոնց շարքում առանձնակի **նշանակություն ունի վստահորդի նպաստավոր շահերից ելնելու և վստահորդի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համար գործելու պարտականությունը:**

Ընդ որում, բացի վստահորդի շահերից և նրա օգտին գործելու պարտականությունից, փաստաբանը նաև **առանց իր վստահորդի հետ համաձայնեցնելու իրավունք չունի ընդունել դիրքորոշում, որը կարող է որևէ կերպ, բացասական անդրադառնալ վստահորդի իրավունքների և օրինական շահերի վրա:**

Փաստաբանի կողմից Դիմողի անունից ներկայացվել է հայցադիմում 27.100.000 (քսանյոթ միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ պատճառված վնասի և 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ փաստաբանի խելամիտ վարձատրության գումարի բռնագանձման մասին, որը ստացել է ԵԴ2/42032/02/23 համարը՝ ընդունվել է վարույթ և նշանակվել դատական նիստի օր:

30.10.2024թ. Դատարանը կայացրել է ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում:

Փաստաբանի կողմից 12.11.2024 թվականին միջնորդություն է ներկայացվել Դատարան՝ հայցից հրաժարվելու և գործի վարույթը կարճելու մասին, որում հայտնել է, որ վեճը լուծվել է արտադական կարգով:

15.11.2024թ. Դատարանը որոշել է՝ թիվ ԵԴ2/42032/02/23 քաղաքացիական գործի վարույթն ըստ հայցի Վանիկ Սուրենի Ասատրյանի սնանկության գործով կառավարիչ Մայիս Գուրգենի Հայրապետյանի ընդդեմ Ժիրայր Արամի Տիգրանյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, կարճել:

Տվյալ դեպքում անվիճելի է այն հանգամանքը, որ Փաստաբանը Դիմողին չի տեղեկացրել թիվ ԵԴ2/42032/02/23 քաղաքացիական գործով հայցից հրաժարվելու մասին, հետևաբար չի ստացել նաև Դիմողի համաձայնությունը: Հետևաբար, Փաստաբանը հանդիսանալով թիվ ԵԴ2/42032/02/23 քաղաքացիական գործով Դիմողի ներկայացուցիչը, չի առաջնորդվել վստահորդի շահով, ներկայացրել է հայցից հրաժարվելու միջնորդություն՝ առանց վերջինիս հետ համաձայնեցնելու և այդպիսով կատարել վստահորդի շահերին հակասող գործողություն:

Ինչ վերաբերում է, Փաստաբանի դիրքորոշման առ այն, որ Դիմողն իր պոզիտիվ գործողություններով թույլ է տվել որպեսզի Փաստաբանի մոտ ձևավորվի այն համոզմունքը, որ իրեն դիմած շահագրգիռ անձը գործում է Դիմողի հետ համաձայնեցված, ապա Հանձնաժողովը գտնում է, որ դրանք բացարձակապես անհիմն են և որևէ կերպ չեն արդարացնում Փաստաբանի արարքը:

Հանձնաժողովը ընդգծում է, որ վստահորդից իր լիազորությունների վերաբերյալ համապատասխան հավաստում ստանալուց հետո փաստաբանը պետք է զերծ մնա որևէ անձի, անգամ ***պատվիրատուին*** վստահորդի գործի հետ կապված որևէ տեղեկատվության տրամադրումից *(բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է վստահորդի համաձայնությունը):*

Սույն դեպքում, Փաստաբանը ոչ միայն տեղեկություն է փոխանակել վստահորդ չհանդիսացող անձի հետ, այլ նաև կատարել է վերջինիս հանձնարարությունը, **առանց իր Վստահորդին նույնիսկ տեղեկացնելու, ինչը պարզապես անթույլատրելի է:**

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը՝ գտնում է, որ Փաստաբանի վարքագծում **առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ կետերի և Կանոնագրքի 3.5.3 ենթակետի պահանջների խախտման հատկանիշները**:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի և Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի մասով.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է՝*

1) ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով.

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ.վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. ***վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:***

Կանոնագրքի 3.6.1 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են որոշակի պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի կարող են արդյունավետ լինել վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Իրենց գործառույթներն իրականացնելիս փաստաբաններն ունեն ոչ միայն իրավունքներ, այլ նաև առանձնահատուկ պարտականություններ և պարտավորություններ իրենց վստահորդների և դատարանների առջև:

ՄԱԿ-ի 1990թ. **«Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ»**-ի մասին փաստաթղթի համաձայն, փաստաբանների պարտականությունների մեջ է մտնում, inter alia, **«իրենց վստահորդներին բոլոր պատշաճ միջոցներով օգնելը, և նրանց շահերը պաշտպանելու ուղղությամբ իրավական գործողություններ ձեռնարկելը»** (կետ 13(բ), իսկ իրենց վստահորդների իրավունքները պաշտպանելիս ու արդարադատության իրականացմանը աջակցելիս պարտավոր են պաշտպանել ազգային և միջազգային իրավունքով պաշտպանված մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, և պետք է մշտապես գործեն ազատորեն և ջանասիրաբար՝ օրենքի և իրավաբանի մասնագիտության ճանաչված սկզբունքների և էթիկական նորմերի համաձայն (կետ 14):

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին» 25.10.2000թ.Rec(2000)21 հանձնարարականի համաձայն, **փաստաբանները իրենց վստահորդների առջև պարտավոր են ձեռնարկել իրավական գործողություններ իրենց վստահորդի իրավունքները և շահերը պաշտպանելու, հարգելու և իրացնելու ուղղությամբ** (կետ 3(գ)):

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համալիրների խորհրդի

(CCBE-ի)՝ Եվրոպական փաստաբանների վարքագծի կանոնակարգի համաձայն՝ **փաստաբանը պետք է իր վստահորդին խորհրդակցի և նրա շահերը ներկայացնի «արագորեն, բարեխղճորեն և ջանասիրաբար», և փաստաբանը պետք է անձնական պատասխանատվություն վերցնի իր վրա վստահորդի հրահանգները կատարելու ուղղությամբ, և պետք է իր վստահորդին տեղեկացված պահի այն խնդրի զարգացումների մասին, որը նրան վստահվել է** (կետ 3.1.2.):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ փաստաբանների հատուկ դերակատարումը, արդարադատության իրականացման հարցում որպես անկախ մասնագետների, իր մեջ ներառում է մի շարք պարտավորություններ, հատկապես այն դեպքերում, երբ այն վերաբերում է նրանց վարքագծին: Չնայած փաստաբանները ենթակա են սահմանափակումների իրենց մասնագիտական գործունեության մեջ, որոնք պետք է լինեն շրջահայաց, արդար և ազնիվ, նրանք միաժամանակ օգտվում են բացառիկ իրավունքներից և արտոնություններից, (Մորիսն ընդդեմ Ֆրանսիայի, թիվ 29369/10, ՄԻԵԴ, § 133): Փաստաբանը ոչ միայն պարտավոր է իրավաբանական ներկայացուցչությունը կատարել բարեխղճորեն, այլ նաև իր վստահորդի շահերը պաշտպանել եռանդուն կերպով, որը նշանակում է, որ երբեմն նրանք պետք է որոշում կայացնեն, թե արդյոք նպատակահարմար է առարկել կամ բողոքել դատարանի գործողությունների դեմ (Տե՛ս Մորիս, § 137):

Այս առումով, փաստաբանի մասնագիտական բարեխղճության չափանիշներ է սահմանում Կանոնագրքի 2.7.2 ենթակետը, որը նախատեսում է փաստաբանի կողմից վստահորդի հանձնարարության բարեխիղճ կատարման հետևյալ պայմանները՝

1. իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն.

2. վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն.

3. հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Իրավունքի համապատասխան ճյուղի իմացությունը նշանակում է բավարար իրազեկվածություն ոչ միայն իրավունքի տվյալ ճյուղի նորմերի և դրանցով կարգավորվող հասարակական հարաբերությունների վերաբերյալ, այլև դրանք համադրելու, վերլուծելու, դրանցում վստահորդի շահերից բխող բացերի իմացություն, մի քանի իրավական լուծումների մեջ վստահորդի շահերին լավագույնս համապատասխանող լուծման ընտրություն և իրավունքի տվյալ ճյուղից բխող պրակտիկայի իմացություն, այդ թվում իրավասու մարմինների կողմից իրավունքի տվյալ ճյուղի նորմերին տրվող գործնական մեկնաբանության և կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ:

Վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրության փաստաբանի պարտականությունը նշանակում է վստահորդի խնդրին առնչվող բոլոր փաստերի ուսումնասիրություն և վերլուծություն:

Հանձնարարությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարման պարտականությունն արդեն վերոնշյալ երկու պարտականություններից ուղղակիորեն հետևող գործողությունների կատարումն է, ինչը ենթադրում է փաստաբանի մոտ վստահորդի խնդրի վերաբերյալ անհրաժեշտ պատկերացման ձևավորում և իրավունքի համապատասխան ճյուղի շրջանակներում դրա

լուծման ուրվագծում, վստահորդի շահերի սպասարկման արդյունավետ ուղիների ու եղանակների կանխատեսում, որի հիման վրա փաստաբանը պարտավոր է ձեռնարկել համապատասխան և համարժեք իրավական և փաստացի միջոցներ, որոնք պետք է լինեն իրական և արդյունավետ, այլ ոչ թե ձևական և պատրանքային:

Վկայակոչած կանոնների վերլուծությունից հետևում է նաև, որ փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում պետք է ապահովվի անհրաժեշտ որոշակիություն և կանխատեսելիություն՝ իրավական երաշխիքներ ստեղծելով կողմերի համար: Այդ կապակցությամբ, փաստաբանի համար վստահորդի իրավունքները և օրինական շահերը բարեխիղճ և ժամանակին պաշտպանելուց բացի, սահմանվում են նաև այլ պարտականություններ, որոնք նա պետք է իրականացնի հանձնարարության կատարման ընթացքում՝ մասնավորապես, տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել վստահորդին հետաքրքրող հարցերին:

Տվյալ դեպքում, սույն կարգապահական գործի նյութերի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ փաստաբան Անի Հովհաննիսյանի և Դիմող՝ սնանկության գործերով կառավարիչ Մայիս Հայրապետյանի միջև կնքվել է «Փաստաբանական ծառայություն մատուցելու մասին» պայմանագիր, որի հիման վրա Փաստաբանը ներկայացվել է հայցադիմում 27.100.000 (քսանյոթ միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ պատճառված վնասի և 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ փաստաբանի խելամիտ վարձատրության գումարի բռնագանձման մասին:

Վերոգրյալից ակնհայտ է դառնում Դիմողի կողմից Փաստաբանին տրված հանձնարարության բնույթը:

Փաստաբանի ստանձնած գործի շրջանակներում, վերջինիս կատարած աշխատանքի հիման վրա հարուցվել է ԵԴ2/42032/02/23 քաղաքացիական գործը: Այնուհետև, Փաստաբանը 12.11.2024թ. միջնորդություն է ներկայացրել հայցից հրաժարվելու վերաբերյալ, որի հիման վրա Դատարանը 15.11.2024թ. որոշմամբ կարճել է թիվ ԵԴ2/42032/02/23 քաղաքացիական գործի վարույթը:

Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանը չի իրականացրել ստանձնած գործի շրջանակներում իր վստահորդի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը, ինչը ենթադրում էր համապատասխան հայցի հարուցումից մինչև ԵԴ2/42032/02/23 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի կայացումը:

Նշվածը իր հերթին վկայում է, որ Փաստաբանը հանձնարարության պատշաճ կատարման համար պարտավոր էր իրականացնել արդյունավետ գործողություններ Դիմողի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Միայն այս գործիքակազմի ճիշտ և արդյունավետ օգտագործման պայմաններում Հանձնաժողովը կհամարեր Փաստաբանի վարքագիծը համապատասխանող Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի պահանջներին համապատասխանող:

Վերը նշվածի համատեքստում՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանը ոչ միայն **չի իրականացրել վստահորդի իրավունքները և շահերը պաշտպանելու իր պարտականությունը, այլև գործել է ի վնաս իր վստահորդի շահերին, ինչն անթույլատրելի է:**

Հանձնաժողովը փաստում է նաև, որ Փաստաբանը որևէ ապացույց չի ներկայացրել՝ ի հավաստումն իր կողմից տվյալ վարքագծային-էթիկական կանոնի անտեսման

ու նախաձեռնողական հատվածի կատարման՝ Դիմողին իր գործի (հանձնարարության կատարման ընթացքի) մասին կանոնավորապես տեղեկացման, ընդ որում՝ այս մասով ապացույցներ պետք է ներկայացներ հենց Փաստաբանը՝ նկատի ունենալով, որ իր կողմից որևէ գործողության կատարման վերաբերյալ ապացույցներն առկայության դեպքում տրամաբանորեն գտնվում են հենց Փաստաբանի տիրապետման ներքո, իսկ նույն գործողության չկատարումն ինքնին հանդիսանում է բացասական (ժխտողական) փաստ, որի ապացուցման պարտականությունը չի կարող դրվել բացասական փաստ վկայակոչող կամ դրական փաստը ժխտող անձի՝ սույն դեպքում Դիմողի վրա:

Հանձնաժողովը, հաշվի առնելով կողմերի տված բացատրությունները, ինչպես նաև նախորդիվ նկարագրվածը՝ հաստատված է համարում հանձնարարության կատարման ընթացքի մասին կանոնավորապես չտեղեկացնելու Փաստաբանի վարքագիծը:

Հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Փաստաբանի վարքագծում առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի և Կանոնագրքի 2.7.2, 3.6.1 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշները:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը:

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից

մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանի վարքագծի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովումն է, որը դրսևորվում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված կարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործառույթի իրականացման մեջ:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Հանձնաժողովը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մասնավորապես՝ այն, որ խախտումն իր բնույթով **բազմադրվագ է,** որոնք լրջորեն վատթարացնում են փաստաբանության հեղինակությունն ու խաթարում են վստահությունը փաստաբանների նկատմամբ: Հանձնաժողովը հաշվի է առնում նաև Փաստաբանի մեղքի աստիճանը, որը մեղմացնող որևէ փաստ կամ ապացույց առկա չէ, ինչպես նաև հաշվի է առնում Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները՝ այդ թվում նաև կարգապահական տույժերի բացակայությունը:

Վերոնշյալի համատեքստում պետք է նաև նշել, որ Փաստաբանը պետք է գիտակցեր, որ իր գործողություններից ու անգործությունից ուղղակիորեն կախված է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանության արդյունավետ ապահովումը, որպիսի պայմաններում էլ պետք է կանխատեսեր իր վարքագծի հնարավոր հետևանքները:

Նշվածի հետևանքով խախտվել են Դիմողի իրավունքները, ինչի արդյունքում նա ստիպված է լինելու ձեռնարկել լրացուցիչ գործողություններ իր իրավունքների պաշտպանության համար:

Հարկ է նաև նշել, որ փաստաբան Անի Հովհաննիսյանը իրեն մեղսագրվող արարքը կատարել է **կոպիտ անփութությամբ** և կատարվածի համար չի զղջացել, վերջինիս վարքագծի հետևանքով տուժել է փաստաբանական համայնքի և փաստաբանի մասնագիտության հեղինակությունն ու բարի համբավը:

Հանձնաժողովը հաշվի է առնում նաև այն հանգամանքը, որ Փաստաբանն իրեն մեղսագրվող արարքը կատարելով գործել է ի վնաս իր վստահորդ՝ Դիմողի, ում շահերը պետք է պաշտպաներ մշտապես:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի նկատմամբ որպես հիմնական կարգապահական տույժ պետք է կիրառել «խիստ նկատողություն» տույժի տեսակը: Միաժամանակ, հետագայում նմանատիպ իրավիճակները կանխարգելելու նպատակով, ինչպես նաև նկատի ունենալով, որ խախտումն իր բնույթով հիմնականում վարքագծային-էթիկական բնույթ ունի՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է

համարում Փաստաբանի նկատմամբ որպես լրացուցիչ տույժ կիրառել «վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա»» թեմայով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի և 3-րդ մասի պահանջներով՝ Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Անի Արտավազդի Հովհաննիսյանի (արտոնագիր՝ թիվ 2610) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն», ինչպես նաև «լրացուցիչ տույժ՝ 6 ամսվա ընթացքում պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով 4 ակադեմիական ժամ ժամաքանակով»՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 6-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2-րդ, 3.5.3-րդ, 3.5.5-րդ, և 3.6.1-ին ենթակետերի պահանջների խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-25058-2-Ա
14 մայիսի 2025թ.
ք.Երևան